ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-5

ՊԵԿ-ԷԱՃՃՁԲ-19/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 05.12.2018թ. N 397/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 21.01.2019թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մուրադյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Գևորգյանը, Գ.Գալստյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի գնահատման մասին

-Գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ առաջին տեղը զբաղեցրած «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամը գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգով սահմանված ժամկետում չի ներկայացրել շտկման ենթակա որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝ Թիվ 2015/362-523 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մաս կազմող Թիվ-1-ից 7-րդ Հավելվածները հայերեն լեզվով, ինչպես նաև Թիվ 2015/362-523 ծածկագրով պայմանագրում կատարված Թիվ-1 լրացման մեջ նշված Հավելված 5-ի նոր տարբերակը:
-Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց նաև «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի 18.01.2019թ. թիվ-500E-0BB6-7F1E գրությունը (կցվում է), որով «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամը դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեին, պատճառաբանելով որ կազմակերպության կողմից շտկման ենթակա փաստաթղթերը գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի տեխնիկական անսարքության հետևանքով հնարավոր չի եղել ներբեռնել համակարգ, միաժամանակ ներկայացրել է համակարգում իր կողմից կատարված գործողությունների լուսապատճենները: «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամը 18.01.2019թ. թիվ-7835-0583-834E նույնաբովանդակ գրությամբ (կցվում է) դիմել է նաև ՀՀ ֆինանսների նախարարին՝ առաջացած տեխնիկական անհամապատասխանությունը վերացնելու և հայտը չմերժելու խնդրանքով:
-Հաշվի առնելով, որ գնահատող չի կարողանում որոշում կայացնել հայտի մերժման կամ բավարարման համար, գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և դիմել ՀՀ ֆինանսների նախարարությանը պարզաբանման նպատակով (կցվում է), արդյոք «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության

զարգացման հիմնադրամը գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի տեխնիկական անսարքության հետևանքով չի կարողացել ներբերնել շտկման ենթակա փաստաթղթերը և եթե տեխնիկական անսարքության հետևանքով կազմակերպությունը չի կարողացել ներբեռնել անհրաժեշտ փաստաթղթերը գնահատող հանձնաժողովը կարող է գրությամբ ներկայացված փաստաթղթերը հիմք ընդունել:

-Գնահատող հանձնաժողովի նիստը վերսկսել << ֆինանսների նախարարության կողմից պարզաբանումը ստանալու հաջորդող աշխատանքային օրը, ժամը 10-00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մուրադյան

Անդամներ՝ Ա.Գևորգյան

Գ.Գալստյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան